ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4000-Ա « 14 » օգոստոսի 2026 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՋԻՎԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.111 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԷՄԻԼԻՅԱ ԱՐԹՈՒՐԻ ՄԵԼԻՔ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետով և հիմք ընդունելով «Երևանի Ջիվան Աբրահամյանի անվան հ.111 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղի հարցազրույցի 2026 թվականի հուլիսի 27-ի արձանագրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության պետի 2026 թվականի օգոստոսի 7-ի հ. Ն/52176-26 գրությունը՝

1. Էմիլիյա Արթուրի Մելիք-Ստեփանյանին 2026 թվականի օգոստոսի 19-ից նշանակել «Երևանի Ջիվան Աբրահամյանի անվան հ.111 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2026 թվականի օգոստոսի 19-ից մինչև 2031 թվականի օգոստոսի 19-ը ներառյալ:

2. Աշխատավարձն՝ ըստ հաստիքացուցակի:

3. «Երևանի Ջիվան Աբրահամյանի անվան հ.111 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Տաթևիկ Դովմալյանին ազատել նույն կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի ժամանակավոր պարտականությունների կատարումից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246